2022-23 ուսումնական տարվա ընթացքում դպրոցի աջակցման թիմի կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում թիմը համակարգված իրականացրել է աշխատանքներ, ըստ նախապես կազմված պլանի: Տարեսկզբին կատարվել են դիտարկումներ, ըստ որի դեկտեմբեր ամսին ներառման են ներկայացվել հինգ աշակերտներ /Համբարյան Աշոտ, Խաթոյան Արինա, Բալայան Սոֆի, Գագինյան Ժորա, Զալինյան Նարեկ/ : Սեպտեմբեր ամսին կազմվել են ԱՈՒՊ- ները, սակայն նոյեմբեր ամսին ՏՄԱԿ-ի կողմից իրականացված վերապատրաստումից հետո / նոր ձևաչափով ԱՈՒՊ-ներ թեմայով/ իրականացվել է նոր ԱՈՒՊ-ների կազմում և լրացում: 2022 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ ներառական կրթության ծրագրում ընդգրկված են եղել 24 ԿԱՊԿ ունեցող աշակերտներ.

	Կարիքը	Ընդհանուր թվաքանակ	Թ	Մ	Ծ
1.	Շարժողական ֆունկցիաների խանգարումներ	3	2		1
2.	Ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարումներ	14	6	7	1
3.	Տեսողական ֆունկցիաների խանգարումներ	1	1		
4.	Լսողության ֆունկցիաների խանգարումներ	1		1	
5.	Ինտելեկտուալ/մտավոր/ ֆունկցիաների խանգարումներ	21	12	8	1

2022 թվականի նոյեմբերի 21-ին դպրոց է եկել 1 ԿԱՊԿ ունեցող աշակերտ /Այվազյան Արեն- 8-րդ դասարան/, իսկ դեկտեմբերի 5-ին դպրոցից դուրս է եկել 1 աշակերտ՝ Մելքոնյան Ալբերտ,5-րդ դասարան: 2022 թվականի 1-ին

կիսամյակի դիտարկումների արդյունքում դեկտեմբերի սկզբին դպրոցի մանկավարժահոգեբանական աջակցման թիմի կողմից կատարվել է դիտարկված աշակերտների առաջնային գնահատում՝ ինչպես ուսման մեջ հետ մնացող, այնպես էլ օժտված երեխաների բացահայտելու նպատակով, որին հաջորդել է ՏՄԱԿ-ի կողմից երկրորդային գնահատումը, ինչի արդյունքում 3 աշակերտ ստացել են ներառական կրթության ծրագրում ընդգրկվելու, 2-ը կանխարգելիչ պլանով աշխատելու եզրակացություններ: Դեկտեմբերի վերջին 3 աշակերտներ /Համբարյան Աշոտ 1-ին դասարան, Խաթոյան Արինա 1-ին դասարան, Բալայան Սոֆի 2-րդ դասարան/ վկայագրվել են մարզպետարանի կողմից:

2023 թվականի հունվար ամսվա դրությամբ ներառական կրթության ծրագրում արդեն ընդգրկված են եղել 27 ԿԱՊԿ ունեցող աշակերտներ.

	Կարիքը	Ընդհանուր թվաքանակ	Առաջնային	Երկրորդային	Թ	Մ	Ծ
1.	Շարժողական ֆունկցիաների խանգարումներ	3	1	2	2		1
2.	Ձայնի և խոսքի ֆունկցիաների խանգարումներ	16	13	5	6	9	1
3.	Տեսողական ֆունկցիաների խանգարումներ	1		1	1		
4.	Լսողության ֆունկցիաների խանգարումներ	1	1			1	
5.	Ինտելեկտուալ/մտավոր/ ֆունկցիաների խանգարումներ	24	10	14	14	9	1

2023թ.-ի ապրիլի 25-28-ը ՏՄԱԿ-ի կողմից իրականացվեց նոր գործիքակազմով բոլոր 27 աշակերտների վերագնահատում և 4 նոր աշակերտների / Մուրադյան Էրիկա 3-րդ դասարան, Մուրադյան Արսեն 5-րդ դասարան, Սաֆարյան Սաքո 4-րդ դասարան և Մուրադյան Սյուզաննա 8-րդ դասարան/ գնահատում, որի արդյունքները պարզ կլինեն սեպտեմբեր ամսին: Հնարավոր է լինի կարիքների և աստիճանների փոփոխություններ:

2022-2023 ուստարվա քննական դասարաններից 9-րդ դասարանի 1 ԿԱՊԿ ունեցող աշակերտ / Սուքիասյան Սերգո/ ծնողի դիմումի համաձայն ազատվել է քննություններից և ավարտել հիմնական դպրոցը, իսկ 4-րդ դասարանի 6- ԿԱՊԿ ունեցող աշակերտներ/ Սաքանյան Ժորա, Ջաղինյան Էլեն, Մալերյան Ռաֆայել, Ներսիսյան Սմբատ, Հովհաննիսյան Լուսինե, Այվազյան Նարեկ/ հանձնել են քննությունները և փոխադրվել 5-րդ դասարան:

Այսպիսով տարեվերջին ունենք ներառված 26 աշակերտներ հետևյալ աստիճանի խանգարումներով

2- ծանր, 15-միջին, 9-թեթև :

Հոգեբանական աշխատանքներն իրականացվել են ը ստ նախապես մշակված պլանի: Աշխատանքներ են տարվել ինչպես ԿԱՊԿ ունեցող երեխաների, այնպես էլ մնացած աշակերտների հետ: Դասարանային, խմբային աշխատանքներ են իրականացվել ինչպես դասարանական, այնպես էլ արտադասարանական պարապմունքների միջոցով: Հոգեբանական զրույցներ են իրականացվել ծնողների հետ:

Հոգեբանական աշխատանքները հիմնականում ուղղված են եղել դիտարկման, հույզերի արտահայտման ճիշտ գնահատման, երեխաների հուզական վիճակների վերհանման, կարիքների գնահատման և հոգեշտկման ուղղությամբ:

Երկրորդ կիսմյակում ըստ գնահատված քսանյոթ աշակերտներից ինը ունեն հոգեբանական աշխատանքների կարիք, որոնց հետ նախապես մշակված գրաֆիկով իշականացվել են համապատասխան աշխատանքներ:

Ձայնի և խոսքի խանգարմամբ ներառված աշակերտների հետ մարտ ամսից սկսած իրականացվել են դիտարկման, գնահատման, կանխարգելիչ, վերականգնողական, շտկողական և զարգացնող համապատասխան աշխատանքներ, որոնք ուղղված են եղել աշակերտի նեղ և գլոբալ խոսքային խնդիրների լուծմանը: Լոգոպեդական աշխատանքների նպատակն է եղել հայտնաբերել, կանխարգելել և շտկել ԿԱՊԿ ունեցող աշակերտների խոսքի հետ կապված ֆիզիոլոգիական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները /արտաբերական ապարատի կառուցվածք և շարժունակություն, հնչյունահնչույթային գործընթաց՝ վանկային կառուցվածք, շնչառություն, տեմպ և ռիթմ, ձայնի ուժգնություն, խոսքընկալում, բանավոր և գրավոր խոսքի մի շարք այլ բաղադրիչներ/:

Բացի նախապես պլանավորված անհատական և խմբային աշխատանքներից՝ իրականացվել է խորհրդատվություն դպրոցի ԿԱՊԿ ունեցող և մյուս աշակերտներին, մշտադիտարկումներ, ինչպես նաև՝ <<Խոսքի զարգացման>> դասընթացներ <<Գիտունիկ>> նախակրթարանում: Տարեվերջին տարվել են աշխատանքներ՝ուղղված խոսքային խնդիրներ ունեցող նոր աշակերտների բացահայտմանը և գնահատման ներկայացմանը: Վերոնշյալ բոլոր աշխատանքներն իրականացվել են անհատական մոտեցման և աջակցման թիմի մյուս մասնագետների հետ համագործակցության սկզբունքով:

Կատարված եռամսյա աշխատանքների արդյունքում իրականացվել են նախապես դրված նպատակների և խնդիրների մեծ մասը: Արդյունքների թերացումները կապված են հիմնականում աշակերտների հաճախումների պասիվության հետ: